



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 35

ՇԱԲԱԹ

27 ՕԳՈՍՏՈՍ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱՌԱՌԱՑ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀԱՐԱՆԻ
Տարեկան 50 Ղր.	Տարեկան 54 Ղր.	Տարեկան 12 Ձր.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱԺԱՌԱՏՈՒՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՑ

Կ. Պոլիս, Ճեղալ Պեյ խանին տակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեկուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը տրջին :

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ Զենիթը՝ քե՛ Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով :

Ծանօթ. — Զենիթ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդէսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են :


Հասր 40 փաւրս

ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(کتابخانه جهان) مطبعه سی — باب عالی جاده سی ۲۳

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ — ՃԻՀԱՆ ԳՐԱՏԱՆ

Կ. Պոլիս Պապը-Ալի Հասսէսի քիւ 23



Ձեռքի, ուժի ու ուժի և ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
և տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Ե Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅԾ. ՓԱՆԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը,
հաստատունը և դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅԾ. ՓԱՆԱՏԱՆ

- | | |
|--------|--|
| ԲՆԲՍ. | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 և 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ. Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համալ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԵԻՏԱՐ | Չարչը Պօլու, թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձիւղեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 և 343 կրկին, Տիւզդուլուի տունը:



BOVININE

ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՍՆՈՒՆՈՒ

ՓՈՔՐ ՏՂԱՅՈՑ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

ԵՒ ԾԵՐԵՐՈՒ

Bovinineը կը պարունակէ զուտ անդային մասերն եղան մսին, ուղեղին, սղեղիկին և ֆոսֆորներն ոսկրային կազմուածքին, խտացեալ վիճակի մէջ:

Պոլիս նոր բերուած այս անզուգական կազդուրիչ դեղը, 27 տարեկանէ ի վեր ծանօթ և գնահատուած ընդհանուր Ամերիկայի, Անգլիոյ, Ճաբոնի և Չինու համալսարանի բժիշկներէն. չերմայէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'զգան ուժասպառութիւն, դակտիլիս, անախորժութիւն, ստամոքսի խանգարում, ընդհանուր ջղաշիւկեղծութիւն, նիւարութիւն, կուրծքի սկառութիւն, անարիւնութիւն և ընդհանուր միակ ներկայացուցիչը ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԲԱՐՔ, Պահճէ-գաբու, Օսմանեան նամակատան ետեւի կողմը:

Կը գտնուի նաև ամէն նշանաւոր դեղարաններու և դեղորէից միջերանոցներու քով:



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՅԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ Թ/հ 35

ՇԱԲԱԹ

27 Ognusnu 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սկիւսարի քաղաքին միացումը (Խմբագրական) . — Վ. ՓԱՓԱԶԱՆ : Զգացումներ (Բանաստեղծութիւն) . — ՍՈԿՐԱՏ ՍԱՐԲԱՅԵԱՆ : Գրական ասուլիս . — ԵՐ. Մ. ՃԻԻՀԷՐԵԱՆ : Նօթեր ու փոքր (Զեղխի ճամբան) . — ԼԵՒՈՆ ՇԱԹՐԵԱՆ : Մի՛ խաբուի՛ կնոջ ժպիսեմ . — ՆԵՐՍԷՍ ԶԱՔԱՐԵԱՆ : Կեղծաւոր լեզու , բամբասող բերան . — Վ. ՓԱՓԱԶԱՆ : Գրական նիւթեր . — ՅՈՎՀ. Գ. ՊՕԶՄԱՆԱՆ : Ցիր ու ցան խօսքեր . — Ա. ԻՍՊԷՋԱՐԵԱՆ : Հովիւր (արձակ ֆերբուած) . — Հ. Յ. ՄՈՄՃԵԱՆ : Խնդուք : Կապիկներու աշխարհին մէջ (Հանրագիտակի բերքօք) . — ԼՈՒԻ ԺԱՔՕԼԻՍ :

ՍԿԻՒՏԱՐԻ ԹԱՂԱՅԻՆ ՄԻԱՑՈՒՄԸ

Ծնողքի մը համար է՛ն նկատելի և է՛ն փափաքելի գործը իր զաւակին կըրթութիւնն է : Այսօր Սկիւտարցի ծնողքը , թաղային միացման խնդրոյն հետ լուծուող դպրոցական գովելի կարգադրութեան համար :

Սկիւտար այն բազմամարդ արուարձանն է , ուր հաստատուած են հայ-ղայ-Քէն աւելի՛ միջակ և բարեկեցիկ ընտանիքներ , որոնց թերեւս հոգ հաստատուելուն միակ և միմիակ շարժառիթն է իրենց զաւակաց կրթութիւնն ու վարժարանի պէտքը : Արդէն անձնուր գիտակցութիւնը ունեցող ծնողքի մը համար կա՞յ ուրիշ մտածումը , իրենց զաւակաց կրթութենէն զատ :

Մինչև հիմա երեք թաղերու՝ Սէլամըզ , Եէնի-մահալլէ և Գուզկունճուկի եկեղեցիները իրենց ուրոյն վարժարանները ունէին , որոնք առանձինն կը կառավարուէին թաղ. խորհրդոյ և Հոգաբարձուներու կողմէ : Մէն մի վարժարանը իրեն յատուկ ծրագիրը ունէր , ինչպէս նաև ուսուցչաց տարբեր մարմինները : Այս երեք թաղերու մէջ հաստատուող ծնողք , ստիպուած ըլլալով մօ-

տակայ վարժարանը տալ իրենց տղաքը, կամայ ակամայ բերան կը գոցէին այն բոլոր դժգոհութեանց դէմ, որոնք զգուանք պատճառած էին ալ՝ և սակայն առանց արդիւնքի: Բան մըն էր կերթար, ինչպէս կ'ըսէ ժողովրդական ասացուածը. ու մէկը չէր վերաբերուէր ու չէր բողոքեր այս էական անել վիճակին մասին: Ամէնքն ալ կը գանգատէին իրարու, ամէնքն ալ դժգոհութիւն կը յայտնէին իրենց թաղի վարժարանէն, ու մէկը չէր համարձակեր բոժոժը կախել, ու կրթական էական խնդիրը առկախ կը մնար տարիներէ ի վեր:

Սակայն, Ամեն Ս. Պատրիարք Հայրը, որուն միակ բաղձանքն է կազմակերպել վարժարանները և ճշգրէլ անոնց ուղղութիւնը՝ յօգուտ մանկուոյն, այս անգամ անձամբ ձեռք առնելով խնդիրը, ուրախ ենք յայտարարելու թէ՛ յաջող և օրինաւոր կարգադրութեամբ մը միացուց երեք թաղերու ու եկեղեցիներուն մատակարարութիւնը, ինչպէս նաև վարժարանները:

Այս գովելի կարգադրութեան կարեւորութիւնը ամենէն աւելի կըզգան անոնք՝ որոնք մանչ ու աղջիկ զաւակներ ունին, և որոնց երեսէն կըսպասեն իրենց ապագայ հանգիստը. ահա այդ կարգի ծնողք երախտապարտ են այսօր Նորին Սրբազնութեան՝ որ կըցաւ այսքան տաշուան ծեծուած և անուղղելի կարծուած կրթական խնդիրը հասցնել այն վիճակին՝ զոր երբէք կարելի չէր իրականութեան մէջ տեսնել:

Արդ՝ իրաց այս վիճակին մէջ, ըստ նորագոյն կրթական Ծրագրին, երեք միացեալ թաղերու վարժարաններուն ԿԱՐՈՂԱԳՈՅՆ տեսուչի մը պէտքը զգալի ըլլալով, դարձեալ Նորին Սրբազնութիւնը, առանց ժողովուրդին թեր ու դէմ կարծիքին և կարգ մը սին ու պատիր ձեւաբանութեանց դիմելու, ինքը ահա՛մը որոշեց կարգել Գալուստ էֆ. Մալաթեանը: Ասկէ աւելի արդիւնաւոր ընտրութիւն ոչ ոք պիտի կրնար ընել, քանի որ Մալաթեան էֆէնտի երեսուն տարիներէ ի վեր մանկավարժութեամբ զբաղած, ինքզինքը կրթական գործին նուիրած, հեզահամբոյր, կարող գործին մարդն է, որուն ձեռնհասութիւնը՝ ինչպէս ըսինք, երեսուն տարիներէ ի վեր յաճախած և վարած վարժարաններու տնօրէնները և թէ՛ ծնողք կրնան սառագել:

Իճատիէի Ներսէսեան-Երմոնեան վարժարանին նախկին և արդի վիճակը բաղդատելով՝ կարելի է ոչ ոչ և ստոյգ գաղափար մը կազմել Մալաթեան էֆէնտի անհերքելի կարողութեան վրայ, և Ս. Պատրիարք Հօր այս արդար ընտրութիւնը, արդիւնք է այն բազմաշան աշխատութեան և կարողութեան, զորս ցոյց տուած է նորընտիր տեսուչը իր վարած վարժարանին մէջ:

Խնդիր է գիտնալ թէ՛ ո՞վ պիտի ընտրուի իբր փոխ-տեսուչ և կամ օգնական Մալաթեան էֆէնտի: Այս ոչ նուազ նկատելի ընտրութիւնը ձգուած է նորակազմ Թաղ. Խորհուրդին: Անշուշտ երեք թաղերու վարժարանները ըստ կարելոյն հսկելու, վարելու համար Մալաթեան էֆէնտի առանձին չպիտի կրնայ հասնիլ. իրեն օգնական մը պէտք է, օգնական մը՝ կարող և ձեռնհաս, որպէս զի կրթական գործը քալէ բաղձացուած յաջողութեան մէջ: Առանց նորընտիր Թաղ. Խորհրդոյ գործին խառնուելու կամ իրենց խորհուրդ տալու յա-


ւակնորութեան, իբր մօտէն ծանօթ թէ՛ կարողութեան և թէ՛ ձեռներէցութեան մասին, մենք կը փափաքինք որ այդ գործին հրաւիրուի Մարտիրոս էֆ. Պապոնեանը, պարկեշտ և գործունեայ անձնաւորութիւն մը, որ ինքն ալ քսան քսան և հինգ տարիներ վարժապետութեան և տնօրէնի պաշտօնը վարած է թէ հոս և թէ գաւառները:

Պապոնեան էֆէնտի այսօր կը վարէ Եէնի-մահալլէի ճեմարան վարժարանը, և ուրախ ենք լսելով բոլոր ծնողաց բերնէն իր գովեստը, կարգապահութեան և ուսման մասին, տղայոց վրայ իր հոգածութեան մասին. բան մը՝ որ կրկին և կրկին կը հաստատէ իր ձեռներէցութիւնը փոխ-տեսչութեան այս նոր պաշտօնին մէջ:

Թերեւս մէկ քանի թեկնածուներ, կողմնակցութեամբ և անճարակ ճիգերով աշխատին դուռեւ այս փափուկ բօսքը, սակայն արդար չըլլար ուրանալ արժանիք, կարողութիւն և ձեռներէցութիւն ըստած կարեւորագոյն տարրերը, որոնցմով օժտուած պէտք է ըլլայ այդ պաշտօնը գրկող անձնաւորութիւնը: Ըստ մեզ թերի տնօրէնութիւն մը պիտի համարուի, եթէ այսքան աշխատութենէ վերջ ձեռք բերուած գեղեցիկ պարտէզի մը մէջ տատասկ մը բերուի դրուի: Բան մը որ դժգոհութեան առիթ պիտի տայ կրկին՝ ծնողական չըջանակներու և թէ լրագրաց սիւնակներուն մէջ:

Սակայն յուսալից ենք թէ՛ նորընտիր Պատ. Թաղ. Խորհուրդը, որուն կարողութիւնը ամէն գովեստէ վեր է, նկատի առնելով այս էական խնդիրը, և թէ աչքի առջև ունենալով թեկնածուներէ ոմանց ապիկարութիւնը, մէկ քանի տարիներու փորձառութեամբ հաստատուած գեղեցիկ և անտեղիտալի տնօրէնութիւն մը պիտի ընէ իր փոխ-տեսչի ընտրութեան մէջ, և այս կերպով Սկիւտարցի ծնողքը պիտի հասնի այն փափաքին՝ զոր կը բաղձար յօգուտ իր զաւակներուն կրթութեան:

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ



Զ Գ Ա Յ Ո Ւ Մ Ն Ե Ր

Կեանքի ունայն սերերը՝ զիս սիրագեղ
Գինովցուցին ու խաբեցին դաւնօրէն,
Արբունքիս մէջ մոլեգնոս ու ծայրայեղ,
Երբ կիրեբըս զրգուեցան բոցեղէն:

Այդ սերերէն ես գանեցայ, զգուեցայ,
Ու դողացող Մահուանըս պէս մօտաւոր,
Զանոնք կ'առնեմ, ու կը գանիմ ալ հիմա,
Կնոջ բոցէ գրգիռներէն ահաւոր:

Զգացումներ, քրքումներ հոգեկան,
Ա՛լ կը մարին կուրծքիս քալը անվրդով,
Ու ես սիրոյ հրայրները մոգական,
Ա՛լ չեմ զգար, ցնորած ու հոգեթով:

Լոկ վեհ բա՛ն մը կզգամ քակաւ կուրծքիս քակ,
Կը բաբախէ սիրսըս՝ ու լանջօք ալ կ'ուռի,
Վրսե՛մ, անմե՛ղ, անհուն սեր մը անյասակ,
Զոր կը քածեմ մօրսս հանդեպ ես կարի:

ՍՈԿՐԱՏ ՍԱՐԴԱՅԵԱՆ

ԳՐԱԿԱՆ ԱՍՈՒԼԻՍ

Ուրեմն պիտի հարցնեն ինձի թէ ինչո՞ւ համար գրածներս հրատարակութեան կուսամ երբ չեմ ուզեր զանոնք անմահացնել: Բայց քնքերցողը թերը կարդալէ վերջ պիտի ձգէ ձեռքէն ու պիտի մոռնայ գրուածքը, եւ. օ՛հ, եթէ գրողն ալ չմոռնայ:

Խոստովանինք որ ամէն բանէ առաջ մեր հանրային մարդոց, մեր գրչի աշխատաւորներուն հանդէպ չունինք այն սուրբ զգացումները որոնցմով տոգորուած են Փրասայի զարգացած դասակարգը: Մեր յառաջդիմութեան, մեր մտաւոր զարգացումին համար ուժ ու աւելն վատնողներուն հանդէպ մեր ունեցած աղնիւ տրամադրութիւնները — եթէ երբէք ունինք — արտայայտելու, անոնց յիշատակը անմահացնելու համար արդեօք ըրած ենք ձեռնարկ մը: Մեր գրականութիւնը առօրեայ կեանք մը ունի լոկ: Այսօրուան թերթը իրիկուան կը թարչամի առտուն նորէն ծնելու համար տարբեր պարունակութեամբ, ու առջինը կերթայ թաղուիլ մոռացութեան վիհին մէջ: Մեր գրագէտները սովորութիւն ունին իրենց արտադրածները օրաթերթերու և պարբերականներու մէջ տարտղնել, չեն խորհիր առանձին հատորով մը հրատարակել ու անմահացնել, կամ գոնէ ամէն գրագէտ իր բովանդակ կարողութիւնը ցոլացնող իր խորհելու և տրամաբանելու ինքնութիւնը արտայայտող գլուխ գործոց մը հրատարակել: Այս չէ՞ միթէ պատճառը որ մեզի, նորերու համար բոլորովին անծանօթ կը մնան նախնի գրողները: Անուն մը կուտան, ու կը դասեն այն գրագէտներու կարգը, զոր դարերը միայն կը ծնին, մենք ալ կը հաւատանք, առանց սակայն բան մը կարգացած ըլլալու անոր գրածներէն բացի հաւաքածոններու մէջ ունեցած քանի մը հատուածներէն:

Հոս տեղն է գնահատելու այդ դասագրքի համար պատրաստուած հաւաքածոները, որոնք գրական տեսակէտով ալ ընտիր գործեր կրնան նկատուիլ, ուստի անկեղծ շնորհաւորութեան արժանի են ողբաց-

եալները Մինաս Գափամաճեան և Սիմոն Գափամաճեան ու Սմբատ Դաւթեան էֆէնտիները, նամանաւանդ Դաւթեան էֆէնտիի վերջին հաւաքածոն «Ճաշակ նոր գրականութեան»ը:

Տարիները պիտի անցնին, մեր գրագէտները ճանչցողները և զանոնք գնահատողները պիտի մեկնին, այն ատեն այդ համբաւն ալ պիտի նսեմանայ, օր մըն ալ անյայտանալու համար թերեւս: Այս չէ՞ եղած միթէ հայ գրագէտին կոչումը: Եթէ անգղագական քերթողին, Դուբեանի քերթուածները ու թատրերգութիւնները հատորի մը մէջ չամփոփուէին, ու եթէ երկու կենսագիրներ աղուոր գաղափարը չունենային անոր կենսագրութիւնը գրելու, «Լճակ»ին և «Տրտունջ»ին անմահ հեղինակը իր այսօրուան համբաւին հաղիւ քառորդը պիտի ունենար, այն ալ հետզհետէ կորսուելու ենթակայ:

Ո՛ր և է գրագէտի մը մահէն վերջ բարեկամներ և համակիրներ կը յղանան անոր գրութիւնները հատորի մը մէջ ամփոփելու գաղափարը: Արդէն այդ տեսակ յղացումներ կունենանք միշտ ամէն հայ գրագէտի դագաղին առջև, որոնք մեր թերթերուն մէջ ատեն մը արձագանդ գտնելէ վերջ կը մոռցուին: Կը յիշեմ որ Ոսկանի, Կ. Գաբազանի, Շահինեանի համար ալ ունեցանք ասանկ մոռածումներ:

Յիշատակէն ամէն պարբերական իր հրատարակման առաջին թիւէն իսկ բաղմամբ օրինակներ տրամադրելի ունի: Այսօր մէկը կրնայ դիւրութեամբ հայտնաբերել «Անալ» ի քսան տարի առաջուան մէկ հաւաքածոն, միշտ սովորական դնով, իսկ եթէ փափաքի 1904ի «Հանրագիտակ» ի հաւաքածոն ունենալ, չպիտի կրնայ գտնել: Սակայն չենք կրնար մեղադրել հայ խմբագիրները, որոնց մեծամասնութիւնը նիւթակտն հեղկացութեան մը մէջ կը գտնուին ու հաղիւ կրնան հասնիլ օրուան պէտքերուն:

Տրապիզոն

ԵՐ. Մ. ՃԻՆԷԻՐԵԱՆ



ՆՕԹԵՐ ՈՒ ՓՕԹԵՐ

ԶԵՂԵՒ ԶԱՄԲԱՆ

Խանութ, պղտիկ խօսքէ մը կարմրող հազիւ հինգ տարեկան աղջիկ մըն էր՝ ան տարիները՝ երբ կը տեսնէի զինքը մօրը հետքով քովի, շիտակ ճամբուն վրայ, ամառուան տօթագին արեւուն, կամ ձմեռան սաստկաշունչ բուքին տակ :

Գառասունը հինգէն քառասունը վեց տարեկան կին մըն էր մայրը, նիհար, կրճախանման կին մը, որ աղքատութեան, տառապանքի չարատանջ բեռն տակ մարեր, հալեցուցեր է իր դեռ ծերութենէն բաւական հեռու եղող տարիքին զուարթութիւնն ու կայտառութիւնը. ստուեր մը աւելի, ձանձրացածի յուսահատ գոյութիւն մը որ փողոցէ փողոց ունայն թափառումներու մէջ ջանացեր է մզնալ կարելի եղած սահմաններով ցաւատանջ բաժինը զոր ճակատագիրը իրեն սահմաներ է :

Աղջիկն ալ մօրը պէս նիհար, տգոյն, ազազուն էակ մը մօրը կը հետեւի շուքի մը պէս, որ կը քալէ անոր առնթեր, գրեթէ բռնի երկարելով ձեռքը անոր ուսոր տանուցի եւ կամ շատ անգամ հաւանական մերժումի մը փոխարէն :

Այս զոյգը շատ սիրտս կը ցաւցնէր ան տարիները՝ սիրտս՝ երբ դեռ ցաւալի յուսախաբութիւններ, խորունկ ցաւերու եւ վէրքերու ազդեցութեան տակ չէր բթացեր, անզգացեր հիմակուանին պէս : Ու կը յիշեմ տեսակ մը քաղցր տպաւորութեամբ այն օրը երբ լացեր էի առաջին անգամ զիրենք տեսնելով, պատանեկութեան միամիտ ու անմեղ տարիներու :

Բայց ետքը ետքը, ալ ամէն օր այս զոյգը տեսնելով, սովորութիւնը, կրկնութիւնը որ ամէն ցաւ կը մերժէ, որ ամէն վիշտ տանելի կ'ընէ, տեսակ մը անզգայութիւն տուեր էին ինծի եւ անտարբեր կ'անցնէի իրենց քովէն, երբ հանդիպէի, հոս հոն շուկան ճամբուն վրայ կամ գործէս դարձինս՝ Եւ օր մըն ալ բոլորովին կորսնցուցի զիրենք. արդէն ինչպէս ըսի հետաքրքրութիւնս կորսուած էր անոնց համար, հետե-

ւաբար եւ անոնց յանկարծակի աներեւութանալը բնաւ իմ ուշադրութեանս առարկայ չ'եղաւ : Ո՞վ գիտէ ի՞նչ էին եղեր, ի՞նչ կ'ըլլան ցեխերու մէջ նետուած վարդեր, կամ հովերուն բաղդին յանձնուած չորցած տերեւներ : Ընկուզում մը եղեր էր, անձայն անշուշտ ընկուզում որ իրենց կեսնքին էր նմաներ, ո՛չ աւելի, ո՛չ պակաս :

* * *

Ի՞նքն է արդեօք, կը շուարիմ, կը մնամ, տարիները անցեր են, բայց փոփոխութիւնը աչքառու է, նոյն իսկ զարմանալի, ան է, կը հաստատեմ բարեկամէ մը, հազիւ տասնը վեց տարեկան աղջիկ, որ մեծցեր ուսնացեր է, տեսակ մը ծաղիկներուն նման որոնք յանկարծակի մէկ քանի օրուան մէջ կը բացուին, կը հասունանան աղբիւր քաղցր շունչին տակ : Առաջուան ցնցոտագոյն աղջիկը չ'է. մեծաքսէ պլուզն ու չըջազգեստը, կօշիկները, ծանրադին գլխարկը հարուստի աղջկան մը տպաւորութիւնն է որ կը թողուն վրաս. բայց լկտի ժպիտ մը որ դէմքին վրայ կը փայլի — հիւրամեծար ու զիւրամատոյց ժպիտ — կը խօսի ինծի ամէն բան : Աղքատութեան մէջ մեծցող այս ծաղիկը, երիտառարդական տարիքին մէջ մուտքին սայթաքեր էր — սայթաքումներուն ամենէն ցաւալին ու սոսկալին — ու լաւագոյն հագուած, չքուած ըլլալու փափաքը որ ամէն երիտառարդուհի փափաքն է, բա՛ւ եղեր էր, քիչ մը պատանեկան անփորձութեան միացած, մտնելու ան ճամբուն մէջ ուր հինա կը քալէ : Լկտի ժպիտը որ ինծի կ'ուզէ, արգահատանք միայն կ'ազդէ ինծի. այս աղքատի աղջկան, ինծի որ իր կեանքին դրուագները գիտեմ, որ իր անկուսին ամէն փուշերուն ականատես եղեր ու հետեւեր եմ : Ո՞ր առջի ամօթխած մանկնակը, ո՞ր նախկին միամիտ ժպիտը, որու յաջորդեր է ցաւալի շարժումները հորիզոնականներուն : Կը ցաւիմ : Ու կը մնածեմ թէ ո՞վ է պատասխանատուն կեանքի այս իրադարձութեանց, աղքատութիւնը թէ մօրը ընթացքը որ թոյլատու գտնուեր է այս աղջկան այսչափ մոլորելուն. թերեւս ո՛չ ոք :

ԼԵՒՈՆ ՇԱԹՐԵԱՆ

ՄԻ՛ ԽԱՐՈՒԻՔ ԿՆՈՋ ԺՊԻՏԵՆ

Beau soleil, toute poudreuse

Կնոջ ժպիտը՝ գոգցես ինքնին իր մէջ մոգական թիւերիչ զօրութիւն մը կը պարու- նակէ, որով տղեղ սեռին ամէնէն դժուա- հաճ անդամներն իսկ երբեմն իր քմահաճո- յից խաղալիք ընելով, կուրօրէն և անգի- տակցաբար զանոնք իր նողկալի շահատա- կութեանց գերի կը դարձնէ:

Կիներու՝ իրենց հակասեռին վրայ ունե- ցած ամէնէն ազդեցիկ ու պատրալից առա- ւելութիւնը՝ ժպիտն է, ատով է որ կը յա- ջողին իրենց բոլոր աւերիչ շողովից ու սը- տութեանց վրայ հրապուրիչ չափ մը ան- ցընել, և զիրենք խնկարկով սեռին տկար անդամներու դիւրագրգիւ զգացմանց թե- լերը թուլցնելով, այդ պատիր պիղծ ժպիտ- նին՝ իբր շոյիչ փայփայանք մը՝ անոնց կա- մահաճ կը կլկեցընեն: Մինչդեռ հրապուրիչ ու հմայքոտ կարծուած այդ ժպիտը, միշտ թաքուն սե խորհուրդներով պարուրուած է, որոնք շատ անգամ մարդկութիւնը դէպի անկում տանելու կը ծառայեն, և դժբաղ- դութիւնը հոն է որ, ընդհանրապէս այդ կործանիչ խորհուրդներու հեղինակները կը յաջողին իրենց ժպիտէն գրաւուող կամա- կատար տգետներ որսալ:

Կնոջ ժպիտին անձնատուր ըլլողը՝ աղա- մանդահիւս թանկագին սրով մը անձնասպան ըլլալու ջանալ է: Ո՛վ որ կնոջ ժպիտին գը- րաւիչ առաւելութիւններէն հրապուրուելով անոր հեղինակին խօս կիրքերուն անձնա- տուր կը լինի, իր իբր այր ունեցած բոլոր իրաւունքներէն հրաժարուելով, անբանի մը հանգոյն երկրորդի մը աւերիչ շողմոգ տը- րամադրութեանց խաղալիք կը դառնայ: Այսու հանդերձ երբէք ըսել չեմ ուզեր թէ՛ կնոջ ժպիտէն բոլորովին պէտք է հրաժա- րիլ, բնա՛ւ, այլ ջանալ անոր հաճոյաբուղի հրապոյրին վայելման մէջ չափ մը դնել, վասն զի ժպիտը կնոջական հրապոյրներու «գայմագ»ն է, բայց, պէտք է զգուշանալ որ այդ գայմագի ըմբռնումը չափաւորա- պէս լինի, որպէս զի սիրտերնիս չ'առնէ:

Կինը՝ իր ժպիտին այս առաւելութիւնը

չատ լաւ գիտնալով է որ ընտանեկան յար- կին մէջ իր բոլոր փափաքները և խորհուրդ- ները յարգել, և կամ խնդրանքները կատա- րել տալու համար՝ իր գլխաւորին կամ քե- ուայրին ու եւայլնի աղաչած պահուն միշտ՝ վարդ և երբեմն մեռելատիպ չրթանց վրայ՝ կեղծ ու խաբուսիկ ժպիտ մը կը յաւելու, նոյնպէս վարպետորդի կինը՝ իր էրկան պատուէրներէն կը շեղի և կամ անհաւա- տարմութեան կը դիմէ, նազանքոտ ժպի- տով մը անոր ներողութիւնը վայելելու կամ ծայրայեղ բարկութիւնը իջեցնելու կանխա- մտածութեամբ (խօսքս պատուաւոր կա- նանց համար չէ): Դարձեալ կանայք՝ իրենց ժպիտին ազդեցութեամբ է որ կը յաջողին նորաբողբոյ և նորազարթ պատանիները որ- սալով, ծնողքներնէն անջատել և բոլորին անոնց սիրտը իրենց ափերուն մէջ առնել:

Վերջապէս, կինը՝ իր ժպիտին ատոնց հանդէպ որքան ազդեցիկ լինելը գիտնալով, մեղի դէմ իբր զէնք կը գործածէ զայն, և ատոր շնորհիւ մեզ՝ իր խորհուրդներուն գերի ընելով, կարթը չրթերնուս անցուցած՝ ըստ իր քմաց զմեզ կը խաղցնէ:

Ուրեմն, ո՛վ յարգելի սեռակիցքս, նա- մանաւանդ երիտասարդներ, զգուշացէք կնոջ սին ու խաբուսիկ ժպիտէն, ան՝ ատով զմեզ իրեն խնկարկունքն ընելով, սիրելի ծնողքներնէդ ու ազգականներնէդ կը բաժ- նէ, և քսակնիդ ու սրտերնիդ իր տրամա- դրութեան տակ առնելով, տեսակ մը քմի- ծաղով քիթերնուդ կը խնդայ: Երբ որ մը ձեր քսակը վատուծնայ, այդ նազանքոտ ժպիտը չուտով կ'եղծանի և խոժոռ հանգա- մանք մը կըստանայ, վասն զի, կինը՝ իր ժպիտով օձահանգոյն խորամանկութեամբ բոլոր չար խորհուրդները կը թաքուցանէ սոսկ ժամանակի մը համար, և երբ կ'արե- նայ իր կէտ նպատակին հասնիլ, այն ատեն ձեզ կը ցուցնէ իր ժպիտին որքան թանկ լինելը: Բնաւ, մի՛ հետեւիք այն խել մը թեթեւաբարոյ պարոններու, որոնք՝ կնոջ ժպիտին մէջ պօն-կու մը նշմարելու թացիկ- ութիւնէն վարակուած են, և «joli visage, bon accueil» ի կը դաւանին:

Փութացէք կնոջ ժպիտովն անոր սիրտը դատելու միամտութիւնը չ'ուռնեալ և «beauté passe, bonté reste» ֆրանսական առածին հե- տեւելով՝ Մի խաբուիք կնոջ ժպիտէն:

Իզգիս

ՆԵՐՍԷՍ ԶԱՔԱՐԵԱՆ

ԿԵՂԾԱԻՈՐ ԼԵԶՈՒ ԲԱՄԲԱՍՈՂ ԲԵՐԱՆ

Բամբասանք ըստած պժգալի ունակութիւնը եթէ ոչ Նոյի տապանէն, գէթ շատ հին օրերու սովորութիւն մը ըլլալու է, անշուշտ կիներէն իճատ եղած, ուրկէ վարակուած են նաեւ պիսապատկառ էրիկմարդիկ: Վերցուցէք բամբասանքը, և ահա կիները պիտի կղպեն բերանին, չունենալով ո՛ր և է նիւթ որոճալու համար: Կանանց ճըռնո՞ւ պէտքէ՞ խօսուընտուըին 80 % անոր ասոր խնդիրն է, զոր մէջտեղ դնելով առաւօտը իրիկուն կրնեն և գիշերը առաւօտ:

Այս զազիր բնոյթը, չպիտի այսպանէի ես իմ կարգիս, եթէ ասոր մէջ վատութիւն մը չի հետեւցնէի: Բամբասանք կըսուի այն յերհերուած կարգ մը դիտողութիւններն զորս կըսեն կըլլան, երրորդ անձի մը հասցէին, անոր բացակայութեանը, մինչդեռ երբ դէմ յանդիման գան, նոյն այդ խնդրոյ նիւթ անձնաւորութեան հետ, օձի շապիկը կըռնակնին կ'անցնեն և բարեկամական կեղծ դիմակով կըսեն կը խնդան անոր հետ, իբր սերտ բարեկամ, և երբ բաժնուէրու ըլլան իրարմէ, բերանները կը լարուին, լեզուները կ'երկարին, և ալ բամբասանքը իր դերը լիով կը կատարէ ամենայն անպատկառութեամբ և անխղճութեամբ:

Մեր դիտաւորութիւնը չէ բամբասանքին ողիսականը ընել կամ անոր հոգեբանական, փիլիսոփայական վերլուծումը չբամբանել մեր ընթերցողներուն, սակայն ըստ սովորութեան կուզենք իրական և կենդանի օրինակով մը բացատրել մեր վերի ըսածը, թէ՛ ինչպէս կիները իրենց տեսնուած ընկերուհիներուն հետ երբ դէմ առ դէմ գան, սէր, համակրանք և յարգանք կը տածեն, և թէ երբ անոնցմէ բաժնուին ինչպէս ակուանին կը սրեն անոնց միտը ծամծմելու համար: Կարծեմ նմանօրինակ նիւթերը երբ կենդանի պատկերներով ընդլայնուին, աւելի շինիչ և օգտակար կըլլան՝ քան թէ ոսկեդարու գրաբառով շարադրուած հատընտիր (?) յօդուածները:

* * *

Պէտք է խոստովանիլ թէ՛ մարդ անուն արարածը աւելի կը սիրէ և կ'ախորժի հիւր ըլլալ, քան հիւրընկալ: Առաջինին մէջ է կերուխում, իսկ երկրորդին՝ բազում ծախք եղիւքմ:

Ինչպէս շատ անգամներ, այս սիւնակներուն մէջ խօսած ենք, այս անգամ տեղն է կրկնել թէ՛ Վերին Վոսփոր օդափոխութեան գացողներու թէ՛ ցերեկուան և թէ՛ գիշերուան սեղաններուն վրայ անպատճառ մէկ քանի հիւրեր կը գտնուին, ազգական, բարեկամ, ծանօթ և այլն, որոնք «այս ինչ աղան անտեղուանքը չէ, մեզայ . . . ինչ մասրաֆ պիտի ընենք քի, մէկ վափուի մը փարայ, անկէ անդին իսկէլէն ելանք մի հինգ փարայ խարճել չեն ի տար . . . » կըսեն ու կը նետուին, անանկ մարդոց տունը, որոնք միասնայի իլիմօնէն ալ աւելի կը թթուեցնեն դէմքերնին ի տես քուքում մը հիւրերուն:

Սառը-հարի նաւամատոյցին վրայ է տեսարանը: Օդափոխութեան գացող ընտանիք մը, դիպուածաւ հոգ կը գտնուին, այր, կին, աղջիկ, որոնք կէս թուալէթով կեցած են հոգ չոգենաւէն ելողները դիտելու:

— Ոտքդ պազնիմ Ագապի, չէմ չէյէդ վար բունէ . . .

— Ինչ կայ, ինչ եղաւ, ո՞վ տեսար . . .

— Սո՛ւս . . . ծանրդ կտնէ, տարվար նայէ, Սուքիասինք, սիւրիւով դուրս կելլան կոր վաբօւէն . . .

— Էյ ճանրմ մեզի՞ ինչ . . . չօգ չէյ . . .

— Քա նասը՛ մեզի ինչ, շիտակ մեզի պիտի գան սաղլամ փարայ . . .

Նոյն ատեն Աղանիկ աղա, որ անտարբեր սիկառ ի բերան չոգենաւին կը նայէր,

— Քա Զիւմրի՛ւտ . . . սըւտնք Սուքիասին թախըմն են . . .

— Հապա, մերեւար, մերեւար . . .

— Չօգ չէյ . . . բէրի ըլլալու չեմ հա՛ւ . . . որի՞ն հոգ . . .

Ու հազիւ կծիկը դնելու կը պատրաստ

տուէին, այդ Սուքիասենք ըստած ընտանի-
քէն ճինիլիզ լակոտ մը վազելով իրենց կը
մօտենայ, և սթխը սթխը ձեռք կը քաշէ
պագնելու համար . . .

— Երկու աչկդ քէօռնայ բիճ մը պուէ-
քիմ . . . ինտո՞ր ալ զօրեց հեռուէն . . .
չան զաւակ, քեզի ալ ըսի քի չէմչիյէդ
ան թառաֆը կոցէ տէյի . . .

Պզտիկ տղան միամտաւար խօսք կ'առնէ,
— Մայիտս, թուեյս, հայիտս, հալաս,
եւ . . . տահա շատ շատ մայդիդնիյ մի-
սաֆիյ տուծանդ տոյ . . . եւ . . . դի-
շեյը պիտի տեսնանք տէ . . . մայիտս ըսաւ
թիմ . . . զօյ ընեն նէ շատ պիտի տեսնանդ,
սանաւ պիտի նըստիմ եւմ . . .

— Հապէրի չօճուգտան ալ . . . երկու
լուսերնիդ քէօռնայ, շիտակ ալ աս թառա-
ֆը կուգան կոր . . .

— Ինծի նայէ Զիւմրիւտ, սուռաթ ըրէ,
աղջիկներ, դուք ալ ճալաճուլա պերանիդ
մի եայմիշ ընէք . . .

— Կեցիր նայինք, քիթէս պերնէս եկաւ
աս տարի, նալէթ ըլլայ . . .

Պզտիկը նոյն պահուն դէպի իրեններուն
կողմը վազելով,

— Նա', նա', մայիդ . . . էտէ'դ էտէ'դ . . .
պոռալով, զանոնք կառաջնորդէ ու ալ
խնդիրը կը լուծուի .

— Օ' . . . դուք ալ հոս կուգայի՞ք, աս
ինտո՞ր եղաւ տէ միտքերնիդ ինկանք . . .

— Սուս եղիր սուս . . . քանի օր է,
երթանք կըսենք, մէյմէկ պատճառով չէր
ույմիշ ըլլար կոր, ասոր ըսի քի, ի'նչ ըլլայ
նէ ըլլայ իլէ պիտի երթամ տէյի . . .

— Բէք աղէկ ըրիք, հա' եւ, ասանկ
հայտէ ընելու չօլուխ չօճուխ ժողվուելու
գալու է . . .

— Բարի լուս Ադանիկ աղայ . . . թո'ւ,
մաշալլահ, անճանաչ վրայ ես եկեր . . .

— Ասծու բարի'ն . . . բարով եկաք . . .

— Բարի տեսանք, բարի լուս աղջիկ-
ներս, ընհ . . . պօյերնիդ սիրեմ ֆիտան
ղաւկըներ . . . թո'ւ, մաշալլահ . . .

— Էյ պարէ տուներնիդ ֆէռահ տեղ
է . . . քուրուկ . . .

— Քա չէ' . . . արեւին քէսկինը, հովին
սէրթը պիր տիւզ մէջն է . . . հէլէ թախ-
թապիթի, բերէ, սիւլըի սինէկ . . . մի

հարցներ, խալպուր տառցուցին վուճուտ-
նիս . . .

— Աս չեղա՛ւ . . . Էյ պաշխա տուն մը
նայէիք . . . ըսելով տիկին Սուքիաս իրեն.
ներուն երեսը կը նայի անյաջող լուր մը հա-
ղորդելու պէս :

— Էյ ոտքի վրայ մնացիք, հոս տեղ մը
երթալու միտք ունէի՞ք քի . . . կը հարցընէ
տիկին Զիւմրիւտ,

— Չէ' . . . ալ ձեզ տեսայ նէ ուրիշին
գլխու ցաւութիւն տալու տեղը չիգայ, սը-
տեղը իրարմով վախթ կ'անցնենք տէ կե-
րակուրէն ետքը բիւթիւնս մէկ ջուրերը կե-
լանք . . .

— Էյ . . . ա' . . . տ . . . ա . . . լ . . .
կը' . . . լ լ . . . ա' . . . կը պատասխանէ
տիկինը հոգեւարքի մը բերնէն ելած վերջին
խօսքերուն պէս կտրուկ և անշունչ չեչտով
մը :

Հիմա բոլորը մէկ կամայ ակամայ տանը
ճամբան բռնած կը յառաջանան, վայրկեան
մը առիթէն օգտուելով տիկին Զիւմրիւտ
ամուսնոյն մօտենալով,

— Դուն չարչին գնայ տէ տասը հատ
բաթիլճան իլէն երկու օխայ խառոզ առ,
թիւուիւ մը էվէլ ըլլայ, տապկենք տէ առ-
ջինին դենք . . .

— Քա ճանրմ ինչո՛ւ մօտութիւն ցու-
ցուցիք, պէլքի հէրիֆները պաշխա տեղ
պիտի երթային . . .

— Ինծի ճին աթին պիտիւրմիշ մընէր
կէնէ, անկաճը չի լսե'ց քի, տօս տօղու
մեղի եկեր են տէյի . . . չօճուխը, եղածը
չեղածը դուրս տուաւ . . .

— Հա'յ սաղ սէլամէթ իսկէլէն չիշնա-
յինք . . . քա ինծի նայէ, ասոնք էկէր քի
գիշեր ալ կենալու ըլլա'ն նէ գործ ունինք . . .

— Դուն մի խառնուիր, աս միտքը ու-
նենալու ըլլան նէ, երդընի պէս արտաք-
նոցին քովի պզտիկ օտան կը ձգեմ ետթախ-
նին, պէօճէկներէն կէս գիշերուն կը ձգեն
կը փախչին . . .

Աղանիկ աղա շուկային ճամբան կը բռն-
նէ, և տիկինը իր չըլլալիք հիւրերուն կը
մօտենայ . . .

— Ինծի նայէ քուրուկ, եսնի մեղի հա-
մար էվէլ պաներ ընես նէ կիւճս կուգայ,
հէլպէթ միսէ կերակուր մը, պատի մը,

զէյթին հաղլը մը, վրայէն եա անուշեղէն մը եախօտ եէմիշ մը ունիս, իշտէ եղաւ գընաց, մենք միսաֆիր ենք, քիչ մըն ալ ըռախիով չէրէզլէնմիշ կըլլա՞նք, իրաւցունէ գիյաֆէթ չունի՞նք եա՞ . . .

— Հէլպէթ, ի՞նչ պիտի ըլլայ ամա, աֆ կընես, քէօնայ աշկը, երեկ իրինկուն խօսախօճաման պուտ խըզարթմասին կատուն խաբմիշ ըրա՞ւ տէ . . .

— Էյ դարար չունի, ողջութիւն ըլլայ, ինծի համար չէ ամա, անոնք միսսիզ չեն ըլլար, թազէ թազէ քիւլպաստի մըն ալ ըլլայ նէ կըլլայ . . .

— Վախ վախ վախ, հիմաճուկ աղաս չարչի կընաց, ինտո՞ր միս չապըսպրեցի . . . կըսէ տիկին Զիւմրիւտ, եադուտի պէս կարմըրեկով բարկութենէն .

Վերջապէս, բուն մեր նիւթին անցնելէ առաջ ըսենք թէ, խեղճ Ադանիկ աղան, չորս անգամ չուկայ կերթայ պէտքերը հոգալու համար, կինը, խոհանոցէն դուրս չելլար կերակուր պատրաստելէն, աղջիկները սեղան չտկել, անկողին ձգելով կըզբաղին, ճաշէն վերջ կառքեր կը բռնուին ջուրերը երթալու համար, գիշերը զբօսարան, ճաշ, պոոյտ, եւն, ընդամենը ՀԱՐԻԻՐ ՈՒԹՍՈՒՆ ղրուչի ծաղք մը կը բացուի Ադանիկ աղայի գլխուն մէկ օրուան մէջ .

Գիշերը ժամը երկուքին մօտ Ադանիկ աղա, հիւրերուն պառկելիք սենեկին պատուհանները կը բանայ, երկու կազ վառ կը ձգէ սենեկին մէջ, որպէս զի սիւլրիսինէկները ներս լեցուին, քիթին տակէն մօըլտալով,

— Տէ հիմա չնթուկեցէք պառկեցէք նաւիմ . . . աճը աճըը սէօքէր, վաղը իրինկուն ալ կեցէք տէ պոյերնիդ տեսնամ . . .

Պոոյտէն և կերուխումէն յափրացած հիւրերը ժամը չորսին մօտ իրենց սենեկը կ'առաջնորդուին,

— Աֆ կընէք . . . մեր տունը չէ քի ըռահաթ ընել տամ, երեք օտայ ունինք, ալթըխ ույտուրմիշ պիտի ընենք . . . կըսէ տիկին Զիւմրիւտ վիզը ծռելով և բերնին երկու կողմը կեղծ ժպիտներ մը յօրինելով .

— Զարար չունի ամա՛, Սուքիաս աղան

օլտուն զատէիք նէ մենք չորսս խտարէ կըլլայինք, չիւնքիւ սարսափելի սօյէն կը խըռկայ . . .

— Էյ աս գիշեր տեղ փոխեց պէլքի ծանը չելլար քուրուկ, մէյ մը բռնվա ըրէ՞ք տէ . . . պէլքի կը փոխուինք . . .

— Գիշեր բարի . . .

— Գիշեր լուս բարի, կըսեն իրարու և կը բաժնուին .

Ժամ մը վերջ .

— Զ . . . զ . . . զ . . . զ . . . զը՛բ . . .

— Վայ չուն շանորդի, միսըս ծակ ծակ ըրին քա՛ . . .

— Ո՛ւֆ . . . մայրիկ, պիպէոի պէս վուճուտս կերի կոր թախթապիթիէն . . .

— Վա՛յ քէօքօղլու բիրէ վա՛յ . . . քիթիս մէջը պիլէ կը մտնան կոր . . .

— Զ . . . զ . . . զ . . . զ . . . զը՛բ . . .

— Ծօ՛ պու նէ սիւլրիսինէկ . . . մատէնինէ՛ մի տիւշտիւք, էյ աղուոր իքուամ շիտակը . . . կընիկ արթո՞ն ես . . .

— Ո՛վ աշքը գոցեր է քի . . . երկու աշուընին քէօնայ, ասեխներ կը խօթեն կոր գիտես քի . . .

— Թէյզէ, Հոռոֆ . . . դո՛ւն նասըլ ես . . .

— Բաթլամիշ ըլլան, քէնէֆին հոտէն քիթս ինկաւ . . . լուսնար տէ դուրս իյնալինք . . .

— Ի՛ւ . . . Ի՛ւ . . . Ի՛ւ . . . մայրի՛դ . . . տը խատնեն տո՛յ . . .

— Սուս մանչս, քէօնայ աշքս . . . չօճուխը խըվւըմ խըվւըմ կուգայ կոր . . . մեղայ մէկ աս գիշեր օտաներնուն ելլային տէ մեզի տային ի՞նչ կըլլար . . .

— Տա սիկաուայիս խութին տուր քա՛ . . . կէշ պիտի պանամ պէրանս . . .

— Սուս նայինք պէքճին քա՞նի կը գարնէ կոր . . .

— Տա՛ն, տա՛ն, տա՛ն, տա՛ն, տա՛ն, տը՛ տը՛ տը՛ տը՛ տը՛ տը՛ . . .

— Հինկ ու կէս . . . վույ տարի մը վախիթ կայ լուսնալուն . . .

— Տեսա՞ք հիմա կերած խալթերնիդ, իլլէ Ադանիկին միսաֆիր երթանք կըսէիք կոր . . .

Ամէնը մէկ կազը կը վառեն կը նստին, ու կսկսին բորոտներու պէս քերուըտիլ .

— Էյէր վաղը իրինկուն ալ մեզի աս անպարը կոխեն նէ հէքիմցու կըլլանք, գիտցած եղէք, կըսէ տիկին Սուքիաս երկու մատին մէջտեղը բան մը պլորելով .

— Զեղի բան մը ըսեմ . . . խօսք կառ .

նէ Սուքիաս աղա սիկառը քաշելով, ի՞նչ
 ըլլայ ըլլայ սըտեղը անկուտիճէ կլոխնիս
 ներս խոթեցինք, գիշերէ գիշեր քիչ մը սը-
 խընթը պիտի քաշենք, անոր ալ խօյայը
 կայ, ես կերթամ վաղը էգաճիէն թախթա-
 պիթիի թօզ կառնեմ քսան փարայի, պառ-
 կած վախիթնիս ալ երեսնիս քացախ կը քը-
 սենք ալըմիշ կըլլանք կերթայ . . .

— Մեղայ . . . զահէր իմ սուռաթս տո-
 մաթէս սալաթասի էր . . .

Ու գահգահ մըն է կը փրցընեն բոլորը
 մէկ, մինչ կէս վառած կազին հոտը չուն-
 չերնին կը կտրէ ու կը հազան :

Գալով վերիններուն, երբ կը տեսնեն թէ
 վարը իրենց ինքնակոչ հիւրերն ելեր նստեր
 կը խօսուըռտին, Ադանիկ աղա գլուխը ճի-
 պինդիկէն դուրս հանելով,

— Զիւմրիւտ . . .

— Ի՞նչ է ան . . .

— Կը լըսես կոր, վարը խառակէօզիւն
 բէրտէն բացուեցաւ . . .

— Սուս եղիր կամայ ըսէ, Ֆառլին եմ,
 բէք աղէկ եղաւ աս թերթիպը, վաղը մուծ-
 նուըռտուն դուրս պիտի իյնան, ինծի ա-
 նանկ կերեւայ կոր . . .

— Ան չէ ամա՛ գործարանին դուռը բաց
 ձգեցի՞ք աճապ . . .

— Հապա՛ դուն բացիր տէ ետին ալ քար
 մը դրիր քի չի գոցուի տէյի . . .

— Սուս նայինք, կեցիր ես անկաճա կե-
 տինը փակցունեմ տէ նայիմ մեր վրայօք ի՞նչ
 կը խօրաթուին կոր . . . ըսելով մահճակալէն
 կիշնայ ու կսկսի մտիկ ընել,

—

— Զեղաւ կընիկ, նալլէթ սուռաթսուն
 ըլլայ, քէչկէմ մտիկ չընէի, հիմա մինչև
 լուս քունս չպիտի տանի . . .

— Քա ի՞նչ եղաւ, ի՞նչ կըսեն կոր քի . . .

— Ինչ պիտի ըլլայ, վաղը թախթապի-
 խիի թօզ պիտի առնեն, երեսնին ալ քացախ
 պիտի քսեն քի գիշերները ըռահաթ ընեն,
 հէմ ալ Սուքիաս օլաճախ հէրիֆը կըսէ կոր
 քի վաղը վար իշնամ տունէն ճիպինդիկները
 բերեմ տէյի . . .

— Վույ ծունը թէփէյիս, ի՞նչ կըսես
 կոր . . .

— Հապա, խարարը տուեր են, գործա-

րանին հոտին համար ալ քիրէճ խայմաղի
 պիտի առնեն եղեր . . .

— Էյ թամամ, ըսել է քի ասոնք հոս
 եէուլի կիււլիւ պիտի նստին . . .

— Երեւացածին նայիս նէ անանկ է ամա՛,
 կեցիր ես բան մը, իճատ մը կը մտմտամ,
 անոնք նայէ նասըլ բուրդ ու բապուճ կը
 փախչին . . .

— Քա չելլաս առկոցառակ բան մը ընես,
 եանի ատոր ալ դող կելլամ . . .

— Դուն թէրթիպը գիտես, ատանկ բան
 մը ըլլալուդ պէս լօխման ուռուֆիին տէ-
 վամ ըրէ . . .

Հետեւեալ առաւօտուն բոլորը մէկ իբր
 թէ խոր և մշիկ մշիկ քուներնէն արթնցած
 կը հաւաքուին վարի բակը սուրճերնին ֆըռ-
 թելու . . .

— Ինչպէս, այս գիշեր հանգիստ անցու-
 ցի՞ք . . . քիչ մը սիվրիսինէկնիս շատ է
 ամա, թախթապիթին անխտար չէ, կըսէ
 տիկին Զիւմրիւտ :

— Զարար չունի, աս տեղը գեղ է, ցե-
 րեկները քէֆերնիս կընենք, գիշերներն ալ
 քիչ մը ույղունսըղութիւն . . . Ի՞նչ ընենք,
 մուհապէթ ըլլալէն ետքը շատ բան աչքի
 չերեւար . . . կըսէ տիկին Ադանիկ պաղ
 արեամբ :

— Ինծի նայէ Զիւմրիւտ . . . խօսք
 կ'առնէ Ադանիկ աղա, գիտես եա՛ . . . ա-
 սոր որի՞ խօսք տուած էինք . . . մարդիքը
 կը պէքլէյեն, իրաւ քի մեզի ալ միսաֆիր
 եկած է ամա՛ . . . Էյ թէքլիֆ չունինք հէլ-
 պէթ մէկ անգամի համար չէ՞ եա, կէնէ
 կուգան . . .

Սուքիաս աղայինք և Ադանիկ աղայինք
 անակնկալի եկած ու սարսափահար իրարու
 երես կը նային, մինչ այս վճիռը արձակող
 Ադանիկ աղա, յօնքերը վեր, դէմքը կախ,
 սիկառը կը պլորէ լուռ անխօս :

— Քա ա՛ս ինչ է, ասքար մենք կեր-
 թանք, հոգ չէ ամա՛, գիտես քի միսաֆի-
 րը ինչ խրտար քի թէքլիֆսիդ ըլլայ նէ ե-
 րեսն ի վեր ասանկ բան չի ղրցուիր . . . կը-
 սէ տիկին Սուքիաս, աջ ձեռքովը միսոյին
 առջին ձեռքովը :

— Քա ճանրմ կեցէք նայիմ, Ֆարազա
 վաղուան թող մնայ մեր երթալը . . . զա՛ . . .
 րա՛ . . . ր . . . չ . . . ու . . . նի . . . տմա՛ . . .

— Եյ տօղոռուս աղուոր միսաֆիր խապուլ ընել, գիշերը ճանապարհներուն պերանը դրիք, հիմա ալ թավան սիւրիւրկէտիով դըշ դըշ . . . կըսէ Սուքիաս աղան, ոտքի ելլալով, մինչ ներսը չաթ ձայն մը կը լսուի . . .

— Վո՛ւյ . . . վախճամ չօճուխը բան մը կոտորեց ըսելով ամէնքը մէկ կը ցատկեն, և իրօք պզտիկ լակոտը գեղեցիկ զարդաման մը կոտորած էր :

Պաղուծիւնը ծայր աստիճանին կը հասնի ու բոլորը մէկ կը պատրաստուին մեկնիլ: Ժամ մը վերջ Սուքիաս աղա նաւամատոյցին վրայ տոմսակները կառնէ ու բոլորը մէկ շագնաւ կը մտնան, դէմքերնին դժոխքի պէս :

Շոգենաւին մէջ .

— Երկու լուսերնին քէօնայ, սօն եաղլըխնին ըլլայ ինչալլահ . . .

— Բիթերնուն ֆիթիլ ֆիթիլ ելլայ . . .

— Եռմուռնախին պերանը երթան, քա ծունը թէփէյիս, հիշ ալ ասանկ մարդ դուրս ձգել չէի տեսէր . . .

— Ինծի կուգայ քի աս թուռչին գիշերը խուռմիշ ըրին, էրիկ օլաճախին պանն է . . .

— Բա մարիկ, պարէ մէկ գիշեր մը ըռանաթ ընէինք նէ, խալպուր տառցուցին վուճուտս . . .

— Վրաս պիպէռի պէս կերի կոր, պօղազս թուք չի մնաց քսեցի խածուկներուն վրայ . . . կը պոքնկիմ կոր . . .

— Բա թէյզէ, ան ինչ բաթլիճան էր քի առջինիս դրին . . . Եյ մեղայ մեծ խօսքիս, շուներուն առջին թափեննէ չեն լկեր . . .

— Հապա արտաքնոցին հոտը . . . քիթըս ինկաւ . . .

— Եյ լամպային իսը, քիթիս մէջը խուռում կապեց . . . Նալլէթ ըլլայ, քէշկէմ չը կենայինք . . .

— Հիշ ալ ճէվիզ իչին կէս կէս բայ ըսելը չէի տեսեր քուրուկ . . . վայ չինկեասէներ վայ . . .

— Բա պէտքը չէ՞ր քի իրենց վերի քառնօլաները մեղի տային տէ իրենք ֆարազըմ վարը չընթըռկէին . . .

— Բա տեսա՞ր եա, չօճուխը ծառքը խա-

վանօզին երկնցուց նէ չխպներ նէ զարներ պիտի . . .

— Ան ալ աղուոր եռվանին շինեց, խըրատ տայիր նէ ասանկ չէր աջողեր . . .

— Բա ան ինչ հոտած միս էր . . . սիրտըս ետ եկաւ . . .


— Նալլէթ սուռաթնուն, մէյ մըն ալ ո՞վ ոտք կը կոխէ քի . . .

— Զահմէթ մընէր, զաթը չեն պանար կոր . . . կըսէ Սուքիաս աղան, փեպտուած հաւու մը պէս անկիւնը կծկուած :

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Ահա այսպէս է մեր ընտանեկան և իբր թէ բարեկամական կենակցութիւնը : Մենք միշտ կուգենք ուրիշին վրայ ինչալ, և քնաւ չենք ախորժիր երբ ուրիշ մ'ալ մեր վրայ ինչալու փորձ մը ընէ : Առերես կը խընգանք, մօտութիւն և համակրանք կը ցուցնենք մեր ընտանեկան յարաբերութեանց մէջ, սակայն երբ անշատուինք իրարմէ, իրարու հասցէին կը տեղացնենք այնպիսի խօսք — անձրեւ մը որ թշնամութեան մէջ չի պատշաճիր տեղալ — Ահա ինչու մեր վերնագիրը ընտրեցինք կեղծաւոր լեզու, բամբաստող բերան :

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ



ՍԱՆԹԻՄ ՄԻ ՏԱՐ

ԱՌԱՆՑ ԱՆԳԱՄ ՄԸ ԱՅՑԵՆԵԼՈՒ

«ՀԷՐՃԱՅԻ» ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՄԵՄ ՇՈՒԿԱՅ, ԳՈՂՈՒՄԸՆԼԱՐ ՓՈՂՈՑ ԹԻՒ 13

Ուր պիտի գտնէք ամէն տեսակ հագուստի, ճերմակեղեցի, ֆանթեզիի, աղամանդի, ժամացոյցներու, շորայներու և ամէն տեսակ կարասիներու ճոխ մթերք մը :

ԵՒ ԳԻՏԷՔ ԻՆՉ ՊԱՅՄԱՆԱՒ

Ա Պ Ա Ռ Ի Կ

Գնած ապրանքնուդ $\frac{0}{100}$ 20 ր կանխիկ, մնացեալը չարաթական $\frac{0}{100}$ 5 ղրշ վճարելով: Կանխիկ գնողին $\frac{0}{100}$ 5 գեղչ :

Հէրճայի վաճառատունը կը փութայ ծանուցանել իր բազմաթիւ յաճախորդներուն թէ՛ մօտ ատենէն պիտի աւելցնէ տեսակը իր ապրանքներուն, զորս պիտի հրատարակենք յաջորդիւ :

ԳՐԱԿԱՆ ՆՈՇԵՐ

Գրականութիւնը ներթափէս բարգաւաճ վիճակ մը չունի, հետեւաբար պէտք չէ անոր համար ժամանակ վատնել :

Հանրային հանգամանք մը առած այս յանկերգէն զատ, շատեր գործնական կրթութեան վրայ խօսելով, դպրոցականներու ալ գրականութեամբ զբաղիլը փնտրակար դնելով, կ'արգիլեն զայն բացարձակապէս: Ահա՛ պարզապէս չմտածուած գաղափարի արտայայտում մը որ պատուար կ'ուզէ կանգնիլ կարծես ամբողջ հոռիկու ձգտումներու հոսանքի մը: Եւ ստուգիւ ասիկա իրականութիւն է մեր մէջ: Մեր գրողներուն մեծ մասը կըսկսին իրենց մարգարտահիւս անուրջներուն և բարձրաթիւ երեւակայութիւններուն մէջ, գրեթէ ապահով իրենց ապագայ անմահութեան համար: Բայց ապրիլու հոգը, կեանքի մտրակին ձաղկումը խորտակիչ հիասթափումներ կուտայ այս անուշ ու երջանիկ երազով օրօրուողներուն:

Եւ անոնց մէջէն շատեր, գրական արժանիքով օժտուածներ, կը յուսահատին և ամլութեան կը դատապարտուին: Ու շատ քիչեր են որ, այն ալ անժխտելի ուժերը, ամէն խոչնդոտներու ու արգելքներու դէմ մարտնչելէ ու տոկալէ յետոյ, յաղթանակով դուրս կ'ելլեն անագորոյն փորձէն: Ահա՛ թէ ինչու մեզի համար, գրականութիւնը իր ամէն ձեւերուն մէջ ենթակայ է անգործութեան ու վերացականութեան և մեր հասարակութիւնը հեգնանքով, արհամարհանքով կը վարուի մեր գրողներուն ու իրենց գործին նկատմամբ:

Ասիկա ընդհանրացած ըմբռնում մըն է, որ իր կարգին մեծ արգելք եղած է գրական ու մտաւորական զարգացման, քանի որ մենք չենք ունեցած գաղափարի բարձրութեամբ տողորուած հարուստներ, որոնք իրենց վիճակին ընձեռած միջոցներով պիտի ուզէին փոխել ժողովրդականացած ըմբռնումին այս սխալ ու խափանաբար ուղղութիւնը: Մեր հասարակութիւնը տակաւին չի կրնար գնահատել գրականութիւնը, իրեւ ազգի մը մտաւոր ու ընկերական զարգացման զօրաւոր ազդակը: Գրականու-

թիւնը որ պաշտօն ունի կուռ ու առողջ գաղափարներ ներշնչել հասարակութեան, ժողովուրդը սակայն զանազաններու կողմէ ներկայացուած այդ գաղափարներուն մէջէն չէ կրցած իր կազմուածքին համաձայն ամենէն սննդարարը, կենսատուն ճանչնալ ու օգտուիլ անկէ: Որով գրականութիւնը բնաւ չարժանանար համակրութեանը մեր ընթերցող հասարակութեան, որ ամենէն աւելի խնամուելու պէտք ունի:

Եւ ցոյց տրուած այս անտարբերութեան պատճառաւ իսկ շատ աննպաստ գաղափարը կազմուած է անոր մասին և անոր դրպրոցներու մէջ աւանդումը անօգտակար դատուած: Սակայն մանկավարժութիւն, քաղաքակրթութիւն, դաստիարակութիւն կը պահանջեն որ տրուած զարգացում մը կատարեալ ըլլալու համար, գեղեցիկին անհրաժեշտ մշակում մը պէտք է ունենայ անհասար: Դպրոցի ուսմունքներու տողանցումին մէջ չունի՞ արդեօք իր օգտակարութիւնը գրական լուրջ ու ընտիր գրուածքներու ընթերցումը: Ընդհակառակը գրականութեան, բանաստեղծութեան ճաշակը աւելի ատակ կ'ընէ տղան գործնական կեանքի պայմաններուն ալ յարմարելու:

Տրապիզոն

ՅՈՎՀ. Գ. ՊՈՋՄԱՆԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Գաղտնիք Գեղեցկութեան, Առողջութեան եւ Սրկայնակեցութեան: Փրոֆ. Պոյտ Լէյնրոտ: Թարգմանեց Անգղիերէնէ, Սամուէլ Գ. Վարժապետեան: Կ. Պոլս, Տպագրութիւն, Յ. Մատթէոսեան, 1905:

Հետաքրքրաշարժ, հրապուրիչ, զբօսալի և ամէն սեռի ու հասակի յոյժ պիտանի գրքոյկ մը, 248 երեսներէ բաղկացեալ: Թղթակազմին գինն է 8 դահ., լաթակազմինը՝ 10 դահ.: 10 է աւելի գնողներու 15 առ հարիւր, և 50 է աւելի գնողներու 20 առ հարիւր գեղջ:

ՊՈՒՊՐԻԿՆԵՐԸ

Առաջնորդութեամբ ՍԸՎԱՃՆԱՆ ԷՖԷՆՏԻ

Սկիւտար Իճատիէ Միհրան էֆէնտիի ղեկաւարտութեամբ 27 Շաբաթ և Կիրակի գիշերները ժամը 2 1/2-ին արտասովոր ներկայացում, ընտանեկան ժամանցի համար: Գինները խիստ չափաւոր, տղայոց կէս գին:

ՅԻՐ ՈՒ ՅԱՆ ԽՕՍՔԵՐ

— ԳՄԾԻԾԱՂ — Կեղծ ժպիտ, առերես խնդակցութիւն մեկու մը, որուն սրտով ուրախակիցը չէ:

— ԾԵՔԾԵՔՈՒՄ — Կնոջավայել պչրաւորութիւն մը, որ առաջին օրջանին բնոյթ, երկրորդին՝ զայն յաւեհ գործածելու պէտքը կը զգայ իր եսասէր կարծիքին գոհացում տալու համար, իսկ երրորդ աստիճանին երբ հասնի՝ մոլորեան կը դառնայ:

— ԱՆՁՆԱԳՈՎՈՒԹԻՒՆ — Ստորին դասակարգէ սեռած մարդիկ յաճախ այս ունակութիւնը կ'ունենան, երբ ինքզինքնին տեսնեն օր մը այն հանգրուանին վրայ որ անակնկալ կերպարանափոխութիւն մը կրնայ համարուիլ:

— ԱՐԺԱՆԻՔ — Ուրիշները պէտք է գնահատեն անկողնակալ կերպով: (Հոգեբանին հասեր է Ծ. Խ.):

— ԱՐԺՆԱՄՏՈՒԹԻՒՆ — Շատ փշերու շնորհուած ձիւք մըն է, որ յաջողութեան նամբան կ'առաջնորդէ:

— ՅԱՐԱՏԵՒՈՒԹԻՒՆ — Անվհաս ջանք, հաստատութիւն ու անխոնջ աշխատութիւն է ասոր բառական բարգամնութիւնը:

— ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ — Առեւտրական աշխարհին մէջ մտնող երեսասարդներուն բարոյական վարկը, նախ փշով գոհանալ, ետէն յաջողութիւնը ոտովը կուգայ երէկ նոյն ուղղութեան հետեւում, առանց խոտորելու այն նամբէն՝ որ լուսաւաւորն է յառաջդիմութեան:

— ԲԱԹՐՕՆ — Ասոր հայերէնը «Մենծ աղա» ըսել է, երբ խղճմտօրէն չեն վարուիր իրենց պատգամներուն հետ, եւ կ'ուզեն աշխատել զանոնք առանց ոեւէ գնահատութեան: (Բառօն, սխալ է ձեր կարծիքը, դրամը ամէն հով կուտայ Ծ. Խ.):

— ԲԻԲՕ — Պլանպէք միւսիւններուն բերանը նայեցէք:

— ԳԼԱՆԻԿ — Երեսասարդներուն մասներուն ուշադրութիւն քեզ, միջին՝ տարիւններուն պիտեւուն նայեցէք, (երբ տեղ տեղ սպիտակ քերքը մուտ գտած են անոնց մէջ) միտք դեղնագոյն ներկուած պիտի գրենք, ծերերուն հազը ու հեքուն մտքերնիդ բերէք, որով լաւ դաս մը կրնաք առնել անկէ զգուշանալու համար: (Պոպօ՝ տօքթօր Ծ. Խ.):

— ՍՐԱՏԵՍ — Հիմա հովիւները միայն այդ յատկութիւնը ունին, դպրոցականները ասոր հակառակը. կը ցուցադրեն իրենց վրայ: (Ախ ինչ քսեմ ակնոցը հնարողին Ծ. Խ.):

Ա. ԻՍՊԷԶԱՐԵԱՆ

ՀԱՅՈՒՀԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

ԱՏԱԲԱԶԱՐ

Այս վարժարանը, զոր կ'վարեն ինն անդամներէ բաղկացած հնամալալութիւն մը, եւ բնիկ ու Ամերիկացի 11 ուսուցիչներէ կազմուած ձեռնհաս ուսուցչական խումբ մը, հիմնական դաստիարակութիւն մը կուտայ բոլոր իրեն դիմող հայ աղջիկներուն: Կ'աւանդուին բնական, իմաստասիրական, չափական եւ այլ գիտութիւններ: Մասնաւոր ոյժ կ'սրուի հայերէն եւ անգլ. լեզուներուն. կ'ուսուցանին նաեւ քուրբերէն եւ Ֆրանսերէն լեզուները: Վարժարանին երկու բնդարձակ եւ օդաւեհ շէնքեր, ինչպէս նաեւ խնամակալութեան երկու բժիշկ անդամներ մեծապէս կ'ապահովեն առակերտունիներուն առողջութիւնը: Անասօլուի Երկաթուղին, որուն մէկ մասնագիծը մինչեւ քաղաք կ'երկարի, համբարդութիւնը խիստ դիւրին եւ հաճելի կ'ընծայէ: Գիշերօթիկներու տարեթուական է 12 օսմ. ոսկի, զոր երկու մասնավարով պէտք է հատուցանել: Դասնակի դասի համար 5 կամ 3 ոսկի կ'պահանջուի, դասառութեան քիւին համեմատ: Երգեհոնի դասի համար 2½ ոսկի կ'պահանջուի: Վարժարանին ԻԱ. տարեօրջանը կ'սկսի Սեպտ. 13 (Ն. Տ.), Դե. իրիկունը: Վարժարանին նոր յայտագիրն ուղղորդներուն ձրի կ'ըրկուի:

Աւելի տեղեկութեանց համար դիմել Մր. Բիքի, Պայպըլ Հաուս, Կ. Պոլիս, կամ գրել Տոգ. Ս. Էֆ. Գալալեանի, Ասեմապետ հնամալալութեան, Ատաբազար: 8—6

ԼՈՎԵՐԸ

Այգուն կանուխ դեռ արեւին
Վարսերն ոսկի հագիւ ցրուած՝
Լեռան ետեւ հորիզոնին
Անհունութեան մէջ,
Հովիւ մը իր սրինգին
Խանդոս ձայներն կը բարձրացնէ,
Որուն արձագանգն միջոցին մէջ կը լսուի,
Մերք մարմնող ելեւեջներով սրճագին:

Ձմրխափայլ մարմանդին վրայ
Ոչխարներու խումբ մը
Կը տարածուի, անհոգ անվիշտ,
Անմեղութեան դրոշմ մ'իրենց հակին վրայ,
Խայտան, կայտան, հմայուելով
Աղու ձայնէն
Սրինգին:

Հոծ քուփերէն, մացառներէն,
Հեռ դայլայներն դուրս կը սլանան
Թռչնիկներուն,
Որոնք նոր այգն կ'ողջունեն,
Տակաւ բարձրացող բոցեղ գունդին
Նուրբ ոսկեհիւս ցոլներուն տակ:

Ու դեռ հովիւն երազներուն
Մէջ թաղուած,
Իր հին սիրոյն յիշատակներն կը խուզէ.
Կ'ուզէ ապրիլ երբեմնի կեանքն հոգեթով,
Որ բիրտան մ'պէս քայլամուր
Շուտով փախան իմէ հեռու
Այժմ կը միայն իր սիրտը լուռ
Կարօտով անոնց:

Ու ա'լ աւելի հրայր մը դրած
Խոցուած սրին խորէն անհուն,
Խանդոս ձայներն
Կը բարձրացնէ
Սրինգին,
Որուն արձագանգն
Միջոցին մէջ կը լսուի,
Մերք մարմնող ելեւեջները
Տրտում:

Հ. Յ. ՄՈՐՃԱՆ

ԽՆԴՈՒՔ

Գիւղացի աղջիկ մը ամուսնացուցեր էին.
աղջիկը հարս երթալու ատեն իր հօրենա-
կան տունէն, իր պարագաներէն բաժնուե-
լուն համար լալ կը սկսի: Հայրը անոր լալը
տեսնելուն՝

— Քանի որ աղջիկս չուզեր կոր հարս
երթալ, թող տունը մնայ, կ'ըսէ.

Աղջիկը, որ լա'լ գիտեր հօրը կամա-
պաշտ ընտանորութիւնը, վախնալով որ ը-
սածը կ'ընէ.

— Վնաս չունի հայրի'կ, վնաս չունի,
կը պատասխանէ, ես թէ' կուլամ եւ թէ'
կ'երթամ, դուն լինծի մի' նայիր:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՊԱՐՏԻԶԱԿ

Վարժարանիս ի՛նչ տարեջանը կրկսի
Սեպտեմբեր 6ին (Ն. Տ.): Հաստատութեանս
Տնօրէն Վեր. Ռ. Զեյնալըսի եւ իր Տիկինը
արդէն վերադարձած են իրենց երկամեայ
բացակայութենէն, եւ յառաջիկայ տարի ու-
սուցչական խումբին վրայ պիտի աւելնան
Քանասայի մէկ նշանաւոր համալսարանէն
երկու Ամերիկացի Երջանաւարներ, որոնց
մէկը գլխաւորապէս պիտի աւանդէ առեւ-
տրական դասընթացը:

Առակերները ընթանեկան խնամք կը վա-
րկեն գիշերօթիկ ուսուցիչներուն, հաստա-
տութեանս մասնաւոր բժիշկին հսկողութեան
եւ Տիկին Զեյնալըսի մայրական հոգածու-
թեան տակ:

Գիշերօթիկ առակերներուն տարեթուական
է 16 Օսմ. ոսկի, 8 ոսկին Սեպտեմբերի սկիզ-
բը եւ մնացած 8 ոսկին Յունուարի վերջերը
վճարելի:

Վարժարանս յատուկ ուսուցիչ մը ունի
գործիական երաժշտութեան համար, այս
դասին համար տարեկան մասնաւոր վճա-
րումն է 1 1/2 ոսկի Օսմ.

Աւելի տեղեկութիւններու համար դիմել
Մր-Բիքի Պայպրի-Հաուս, Կ. Պոլիս, կամ
Տնօրինութեան՝ Պարսիզակ:

Այն առակերները որոնք Պոլիսէն եկած
աւետներն կ'ես գնով տուտակ առնել կուզեն,
պէտք է որ մինչեւ Սեպտեմբեր 1, Ը. Տ. ի-
րենց անունները արձանագրել տան Գրիգոր
էֆ. Շահպաղեանի, որ կը գտնուի ի Պայպրի-
Հաուս թիւ 10:

[8]

ՀԱՄԱՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒԻՏԱՔՕԼԻՕ

ԿԱՊԻԿՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՁ

ԵՐՐՈՊԱՅԻՆԵՐԸ ԻՆՁ Կ'ԸՆԵՆ

Մեր փոքր կարաւանը լաւագոյն կերպով կազմակերպուած էր : Նօթուէն , իր կինը և զաւակը կը բաւէին , քանի որ կեղրոնական Ափրիկէի մէջ անկարելի է երկու բնիկներ հաշտեցնել իրարու ութը օրուան համար : Եթէ համաձայնին իսկ , քեզի կողովակելու և գիշեր մը՝ անտառի մը խորը քեզի մինակ , անպատասխար թողելու համար է : Բայց ես այս վախերը չունէի , քանի որ Մայամպայէն մինչև Լոբէզի հրաւանդանը , անանկ չըջանակի մը մէջ պիտի ճամբորդէի , որ 40—50 մղոն հեռու էր ծովեզրէն :

Սակայն ծովեզրեայ քաղաքները հաստատուած Եւրոպացի վարձակալները կ'իմանան թէ ի՞նչպէս սպաննուած է ճերմակ մը իր բնիկ առաջնորդներէն և հազարումէկ միջոց ունին այդ մահուան վրէժը լուծելու առանց ինքզինքնին վտանգի ենթարկելու : Այս ընթացքը կը բռնեն ո՛չ թէ մարդասիրութեան համար , այլ իրենց շահագործման և անձնական ապահովութեան համար իսկ , որովհետեւ չեն ուզեր որ սպիտակամորթ մը ենթակայ ըլլայ առաջին աւազակ բնիկին յարձակման և կողոպտումին : Այս բանին համար ալ պարզ միջոց մը ունին , առանց ուղղակի գործելու գործուած ոճիւրին հեղինակին դէմ :

Երբ ճերմակ մը սպաննուի ներսերը տեղ մը , Եւրոպացի վարձակալները կը սպասեն որ այդ տեղի ցեղապետը Եւրոպական վաճառքի մը պէտք ունենայ և իրենցմէ մէկուն իրանութը գայ փոխանակութեան համար : Վաճառականը , շատ սիրով կ'ընդունի . ուսի կամ ալուկուի բաժակ մը կը հըրամցնէ և խօսքը կամաց կամաց կը բռնէ զէպքին վրայ կը բերէ : Պետք ինքզինքը կը պաշտպանէ և կ'ըսէ թէ բնաւ համակարծիք չէ սպաննութեան : Խօսակիցը կը խան-

դաւառուի և կը յայտարարէ թէ բոլոր աշխարհ համոզուած է որ ազնիւ մէկը անպատիւ չպիտի թողու բարեկամ ճերմակի մը սպաննութիւնը որ իր երկրին մէջ գործուած էր : Խօսքը կը վերջացնէ ուսի տակառիկ մը ցոյց տալով , զոր պահած կ'ըլլայ պետին նուէր տալու համար , իբր բարեկամութեան նշան երբ մեղապարտը պատժուի :

Այս խորամանկ գզուանքէն թուլցած , ցեղապետը կը դառնայ իր տեղը և չուշանար դարձեալ գալու , իրեն հետ բերելով սակայն ոճրագործին գլուխը ցիցի մը ծայրը անցուած :

Այն վաճառականը որ այս տեղեկուած թիւնները տուաւ ինծի , նշանակալից ժպիտով մը յարեց :

— Հիմա հասկցա՞ք թէ ի՞նչ խորամանկութիւններ ի գործ կը դրուին սպիտակներու բարեխառութեան համար : Մենք ստիպուած ենք մեր ցեղին արժանիքը բարձր բռնել : Մեր գլխաւոր սպառնալիքն է յայտնել թէ , երբ արդարութիւնը չհատուցուի մեզի , մենք ալ պարտաւոր ենք քաշուիլ , հեռանալ այդ տեղերէն՝ մեր ապրանքներով : Եւ որովհետեւ ատիկա ցեղապետներուն գործին չի գար և մանաւանդ յանցաւոր մը չկրնալ պատժելու պարագային իրենց արժանապատուութեան կը դպչի , կը գործադրէ մեր պահանջը և դիւրութիւն կուտայ մեր պտոյտներուն դէպ ի երկրին ներսերը : Այսպէս , ձեր ճամբորդութիւնն ալ դիւրութեամբ պիտի կատարուի , եթէ մանաւանդ եզերքէն շատ չհեռանաք : Գալով վայրի գաղաններու վտանգին , այն ատեն ձեր պաղարիւնութեան , ճարտարութեան և զէնքերուն պէտք է դիմէք , ինքզինքնուղ պաշտպանութեան համար :

* *

ՀՐԱՇԱՆԻ ԶՐՈՅՑՆԵՐ

Իմ ճամբորդութեանս նպատակն էր երկրին բոլոր կապիկներուն մէկ հաւաքածոն չինել :

Այս պարագաներուն մէջ բաւական էր ինծի համար մինչեւ Լորէզի հրուանդանը երթալ անտառներու ճամբէն :

Կորիւններու բնակավայրը կը գտնուի հարաւային լայնութեան երկրորդ աստիճանէն մինչեւ հիւսիսային լայնութեան առաջին աստիճանը , կոյս անտառներու , ճահճային դաշտերու , և ժայռային լեռներու անսահման շղթայի մը վրայ , հրաբխային և խորունկ մանուկրտի մը մէջ :

Մեր մեկնումին օրն իսկ , իջեւանած էինք բնիկներու պզտիկ գիւղակի մը մէջ , որուն պետը իր տնակը մեր տրամադրութեան տակ դրած էր : Նօթուէի ծանուցի մեծ կապիկը որսալու դիտաւորութիւնս : Նախապէս քիչ մը զարհուրած երեւցաւ , բայց ակնարկ մը նետելով քարապինայիս վրայ , որուն ի գործ դրած հրաշալի ազդեցութիւնը տեսած էր վարազի մը վրայ զօրցորեկին գետին փռած և կտոր կտոր ըրած էի , պատասխանեց թէ ատկէ աւելի դիւրին բան մը չկար : Պիտի առաջնորդէր զիս անանկ տեղեր՝ ուր բնակիլը նախամեծար կը համարէր այս մեծ կապիկը :

Գլխաւոր բնակիչները մեր շուրջը բուրուած էին կարգաւ . երբ առաջնորդս անոնց հասկցուց դիտաւորութիւնս , ամէնքն ալ սկսան շարժուածներով խօսիլ նոյն ժամայն , և հասկցայ որ իւրաքանչիւրը իր պատմութիւնը կը պատմէր այս արտակարգ կենդանիին վրայ : Նօթուէ , իմ խնդրանքիս վրայ , սկսաւ ինձ թարգմանել եռանդեամբ բոլոր այս սոսկացնող պատմութիւնները , և ես մտիկ ըրի մինչեւ գիշերուան յառաջացած մէկ ժամը , այս մասին ըսուած հրաշալի պատմութիւնները զորո միմիայն խափշիկներուն երեւակայութիւնը կրնար հնարել :

Շահեկանութենէ զուրկ չերեւիր ինձ մանակից ընելու ձեզի այն մէկ քանի դարմանալի հաւատալիքներուն՝ որոնք կը շրջին Բօնկոյի մէջ՝ կորիւն համար :

Ամենաեզականներէն մէկը կ'ընտրեմ ձեզի :

Այս կողմերու բնակիչները կը կարծեն թէ կորիւն միւս կապիկներուն պէս կենդանի մը չէ : Իրենց կարծիքով , այս արտակարգ անասուններուն մարմինը կենդանացած է հոգիներովը կարգ մը մեռած բնիկներու , որոնց գործած չարիքներուն համար , Արարիչը՝ Մեծ Մարամպան զլացած է անոնց յաւիտենական խաղաղութիւնը և դատապարտած է դարձեալ ապրիլ երկրիս վրայ այս հրէշներու մարմինին մէջ :

Ամէն կորիւններն ալ այսպէս չեն սակայն , այլ միայն մէկ քանին , միւսներէն աւելի մեծերը , զօրաւորները և աւելի չարերը : Բնիկներուն կարծիքով այս կորիւնները իրենց ուժին և կատաղութեան կը միացնեն նաեւ մարդուս հաւասար իմացականութիւն մը : Ո՛չ կարելի է բռնել զանոնք և ո՛չ ալ սպաննել : Անխոցելի են անոնք : Եւրոպական քարապինաներու գնդակներն անգամ իրենց մարմինն վրայ կը տալիսկան ոչ թէ որովհետեւ իրենց մորթը միւսներէն աւելի տոկուն է , այլ որովհետեւ մեռելի մը հոգիովը կենդանացած , զօրութիւնով մը պաշտպանուած են ամէն տեսակ յարձակումի դէմ :

Այս կորիւններուն մէջ կան որ վայրի հըսկայ ջղջիկի պէս կը յարձակին մենաւոր ճամբորդներու վրայ , ակռայի հարուածով մը կը բանան անոր կողորդը և թող չեն տար մինչեւ որ բոլոր արիւնը չծծեն : Ուրիշներ կան , որոնք հսկայ ծառերու սիրտին մէջ պահուած , հոնկէց անցնող բոլոր դժբաղդները կը բռնեն , կը խեղդեն և մացառնեւորուն մէջ կը նետեն , ուր կեր կ'ըլլան շնագայլերու և անգղերու : Անոնց մէջ կան ալ որ իրենց հին կեանքը յիշելով , կը ձանձրանան անտառներու խորը իրենց քաջքած կեանքէն , որովհետեւ այս կորիւնին ներքեւ ուրիշներու հետ յարաբերութիւն չունեն : Այն ատեն կուգան գիշերանց կը թափառին գիւղերու շուրջ , և վա՛յ այն բնիկ կիներուն որ անոնց հանդպելու դժբաղդութիւնը կ'ունենան :

(Շարունակելի)

Արժօնաւէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Տպագրութիւն — ՃԻԶԱՆ ԳՐԱՏԱՆ

Պապ-Ալի ԳԱՏԵՍԻ թիւ 23

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՊԵՐՁԵԼԻՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Կ. Պոլիս, Սուլթան Համամ, Թօփալեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանք տուկունութեամբ և գիններու անմրցելի աժանութեամբը շահած է բոլոր իրեն գիմող յաճախորդաց վատահովիտները, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հագուստներու, կանանց քէյրոյիներու և տղայոց չիք և դիմացկուն փոքրիկներու ճոխ մթերք մը պատրաստ ունի, որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հագուստի և ուրիշ նմանօրինակ պիտոյից։

Սակարկութիւն չկայ, թիւը 2 դրէ Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին։

50—50

ՇԷՆՔԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԱԹ ՆԵՐԿԵՐ

National wall coating & Lythite

Աժան, լուսաւոր, շուտ կը չորնան, վրայ չեն ելներ, գոյներնին չեն նետեր, ջուրի և անձրեւի կը դիմանան, մշուկները կը չնշեն ևն. ևն.

Պատանայի ներկերուն իւրաքանչիւր քառ. արշընը 10—15 փարայ։

Ներսի և դուրսի ներկերուն իւրաքանչիւր քառ. արշընը 20—30 փարայ։

Տեղւոյս ամէն կողմի Պատ. յաճախորդաց դիւրութեան համար, վաճառատունս պատրաստ է աոյն գնեռով իր վրայ առնել ամէն գործ, թէ ներկն և թէ գործաւորոյցիք մէջն ըլլալով։

Թուրքիոյ միակ կեդրոնատեղին

Կ. Պոլիս, Ալաճա-Համամ, Պազըր-ճըլար թիւ 26, Գ. Անէմեան։ — Գաւառները գործաւորներու պէտք կայ, դիւրամատչելի պայմաններով։

15—20

ՖԷՆԻՔՍ ՕՐՔԻՇԻՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1860 ԻՆ Ի ՎԻԷՆՆԱ

ԿԵԱՆՔԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեսի գումար

31,008,000 Ժրանք

ՀՐԴԵՀԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեսի գումար

17,000,000 Ժրանք

ՖԷՆԻՔՍ Հաւաքոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ չէնք, ապրանք և կարասիք։
 ՖԷՆԻՔՍ Հաւաքոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք մարդկային կանքի վրայ։
 ՖԷՆԻՔՍ Հաւաքոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ չողենաւի եւ առաքատանաւի վրայ։

Ընկերութեան գրամատունն է ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ, Ընդհանուր գործակալութեան գրասենեակն է Պոլիս, Ալիանաք խան, Թիւ 11—16։

Ընկերութեան կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ։

Լիազօր Ընկայացուցիչ

Գ. ՖԷՐԱՏԵԱՆ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԹԵՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ՊՍԱԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

ԵՒ

ՀՈՏԱԻԷՏ ԹԵՅԵՐ

Կ. Պոլիս, Պահճեհափու, Ճեյալ-Պեյ խան, քի. 10

Ա Ն Տ Ե Լ Ի Պ
Վ Ա Ժ Ա Ռ Ա Տ Ո Ւ Ն
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՆՈՒԱԳԱՐԱՆԱՅ ԵՒ ՊԻՏՈՅԻՑ

Մ Ա Ս Ն Ա Ի Ո Ր Ա Բ Ա Ր



Ֆոնոկրաֆի եւ Գլաններու Կրամօֆոնի
եւ երկկողմ Բլագներու, Կեղրոնա-
տեղի Պահճե Գաբու, Հաճի Պեքիբ
Էֆենտիի կից, Եալտըզ խանի տակ
քի. 2: Մասնաճիւղ Պահճե Գաբու
քի. 52:

Վաճառատանս
30 տարիներէ
ի վեր ծախած
ապրանաց տո-
կունութեան և
թէ նորոգու-
թեան մասին
չսհած համբա-
ւը բազմաթիւ

յաճախորդներուն ծանօթ ըլլալով, կը փութանք յայտարարել թէ՛ այս անգամ նոր
դրութեամբ և կատարելագործեալ լաւ տեսակ Կրամօֆոններ և երկու կողմն ալ զատ
զատ եղանակներով Բլագներ բերել տուած ենք, և կրնանք մրցիլ հրապարակի վրայ
գտնուած բոլոր նմանօրինակ ապրանաց հետ, թէ՛ տոկունութեամբ, ձայնի առաւելու-
թեամբ և թէ՛ աժանութեամբ: Գաւառներէն եղած յանձնարարութիւնք կը կա-
տարուին ամենայն ուշադրութեամբ և հոգածութեամբ:

Անդամ մը փորձելը բաւական է հաստատելու համար մեր ըսածները Դիմել՝
եղրոնասեղին: